

## ՀԱՅՆԵՐՆԵՒՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌՆԻՐԸ ԱՐԴԻ ԹՈՒՐԳԵՐՆԵՆՈՒՄ

Ժամանակակից թուրք գրականությունից և մասամբ թուրքական արդի բառարաններից դուրս գրած հայերենից փոխառյալ բանավոր և գրական փոխառությունների քանակը բավականին մեծ է: Գուցե զարմանալի թվա նաև այն հանգամանքը, որ հանրապետական Թուրքիայի վերջին հիստուն տարիների ընթացքում, աճում են հայերենից կատարված գրական փոխառությունները: Դրա դրդապատճառներին կանդիդատականք քիչ ավելի ուշ, նշենք միայն, որ թուրքական գրականությունից մեր դուրս գրած բառերի քանակը, առ այժմ, հասնում է 223-ի: Դրանք ստորև ներկայացնում ենք ըստ բնագավառների:

### 1. Երկրագործական (և դրան հարակից) բառեր, թվով՝ 32:

Ամենաշատ փոխառությունը, ըստ մեր կազմած բառացուցակի, երկրագործության և հողամշակության վերաբերյալ բառեր են, և դա պատահական չէ: Արևմտյան Հայաստան ներխուժած վաչկատուն ցեղերը, նստակեցության անցնելուց հետո, հողամշակությունը սովորում են հայերից, քանի որ վերջիններս իրենց բնօրրանում վաղուց արդեն հմտացել էին տնտեսության այդ ձևում: Երկրագործական գործիքների և միջոցների հետ մեկտեղ երկվոր թուրքերը նույնությամբ կամ հնչյունական տարբերություններով փոխ էին առնում այդ զբաղմունքի հետ առնչված բառեր. դրանք են՝

ակոս> ագոս/հագոս, առատամ>արադամ/արադան, արոս>արոս (հարոս, \*գութան>բութան, գործևոր>բորզևիլ, խարազան>հարազան (խորդնտուն իմաստով. նաև՝ խարազանի հոտաղ>հարազան հողաղը), խորիկ>հորիք, \*խոփ>հոփ, \*հերկ>հերք, հորովել>հորավել, \*հոտաղ

\* Աստղանիշներ կրողներն այն բառերն են, որոնք ակադ. Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» քննարկված են որպես փոխառյալ բառեր թուրքերենում, բացի՝ «դարակ», «լուռ», «տուտուռ» բառերից, որոնց փոխառության մասին նշված է նույն հեղինակի «Հայերեն գավառական բառարանում»:

(հոտաղի քար) > հոդաք (հոդաք թաշը), \*մաճ > մաշ, Վաճկալ > մաշքալ, մոտկամ > մոդգամ/մոթքամ, փոխնակ > փոխլու, \*տափան > թափան, մշակ > մուշաք, հանդ > հանթ, \*կամ > գեմ (սիրա, խոտի կապ իմաստով), կամ(ն) > գեմ (կալատեղ իմաստով), կալտավար > գալդավար (տավարի փարախ), \*թումբ > թումփ, թեղ > թըղ (շեղշ և արմտիքի կույտ), դեզ > թըզ/թեշ (հացահատիկի, ցորենի դեզ), \*ճել > շիլ, \*խոզան > հոզան, \*աղբուն > ահփուն (գոմաղբ), աղուրի > ահուրա (որթի ճյուղ), աշարա > աշարա (տարեկան), ոռոգ(ել) > արըբ, \*պարան > բարան, \*չորս(նոց) > չորոս (չորս եզով արոր):

Հետաքրքրական է նշել, որ ներկայացված այս բառերի մի քանիսը թուրքերեն գրական լեզվում ունեն իրենց համապատասխան հունարեն փոխառությունները [26, էջ 84 և 2, էջ 306, 308]։ Իսկ դա մի անգամ ևս հաստատում է, որ եթե թուրքերը Արևմտյան Հայաստանում երկրագործություն ընդօրինակել են հայերից, ապա Փոքր Ասիայի արևմուտքում հաստատված թուրքերը՝ հույներին:

2. Կենդանիների (միջատների) անվանումներ և անասնապահական բառեր, թվով՝ 19:

անիծ > անըզ, թստան > թսթան (միջատը), \*թրթուր > թըրթըր/թըրթըլ, իշամեղու > աշմեղուն(ն), \*փեթակ > փեթեք, \*բուլն > փին, թառ > թար, անաճ > անաշ, բադիկ > բադիք, \*գոմ > քոմ, գոմեշ > քյոմյուշ, \*մոզի(կ) > մոզաք/մոզիք, \*էշ > էշեք, \*նախիր > նահըր (նախարպան ձևից՝ նահըրը), \*քուռակ > քուրիք/քուրաք, \*տավար > դավար, կեր(ակուր) > աքուր (անասնակեր), \*կոպտոն > քյոֆթյուն, \*մսուր > մյուսուր:

Ինչպես նշում է Նաջի էրենը «Քուլտուրների գաղթը» հոդվածում, քոշվորն այն մարդն է, որ իր ապրուստն ապահովում է մանր եղջերավոր անասուններով [31, № 362, էջ 8772]: «Տավար, մոզի, նախիր, գոմ» բառերի փոխառությունը խոսում է այն մասին, որ թուրքերը խոշոր եղջերավորների անասնապահություն մ սկսել են զբաղվել հայերի հետ շփվելուց հետո: Այդ է վկայում նաև պրոֆ. Դ. Ն. Երեմեևը «Թուրքերի ծագումը» աշխատության մեջ [2, էջ 308—309]:

3. Բույսերի անվանումներ (միրգ-բանջարեղեն), թվով՝ 15:

արած(ել) > արազ (մի տեսակ խոտ), \*անանուխ > աննըբ/անուխ, \*ավելուկ > էվելիք, \*բազուկ > փեզիք, \*բանջար > փանջար, \*փրփրեմ > փիրփիրեմ/փերփեր, \*կորնգան > քորունգա, թևք > թեվեք, \*պատիճ > բադըշ, սալոր > սալոր (նաև որպես ազգանուն), անկուտ > անգութ, ծիլ/ծել > զիլ/զիլենմեք, անտախ > անդաք, արքատ/արգատ > արքըթ (որ-

թատնկի կտրված ավելորդ ճյուղերը), մոլ>մոլ (ծառի բնի կողքից ծլած երկրորդական ճյուղ):

4. Շինարարության և կացարանի վերաբերյալ բառեր, թվով՝ 24:

վարպետ>բարբեթ, \*հիմ(ք)>հիմ, \*հյուղ/խուղ>հուղ, մառան>մարան, \*մարագ>մերեք, դարակ>թերեք, \*գերան>քերան, \*մարդակ>մերթեք, \*առաստաղ>արասթաք, \*ձող>զող/սող, \*բակ>փեգ, \*կափանք>քեփենք, \*դուռզոց>թըրքազ, սողնակ>զողնա, \*գամ>քամա, \*քարուկիր>քարգիր, \*խիպար>հըբար, որմ>արմ, պատ/պատել>բաթ/բաթլամաք, \*սալ/սալաքար>սալ/սալթաշը, \*ջորդրան>չյորթեն, ապարահ>արարա, \*ագուգա>աքուքա, \*գուռ(ն)>քուռնա:

5. Արհեստների և գործիքների վերաբերյալ բառեր, թվով՝ 9:

մուրճ>մուրչ, կեռ>գեր, \*կաճ>քեչե, թեշի/թեշիկ>թեշի/թեշիք, առէջ(ք)>արգաչ, \*մաղման>մաղման, մանած>մանազ/մանը, \*խաշիլ>հաշըլ, զող(եւ)>զող(լամաք):

6. Կենցաղային և տնային տնտեսության իրերի վերաբերյալ բառեր, թվով՝ 18:

\*իլիլիկ>իղլիլեք, \*քարման>քիրմեն, \*լող/լողքար>լող/լողթաշը, \*թեկ>թեկ, \*խաչերկաթ>հաչիրգեթ, կթեկիք>քաթիլիք, կարաս>քերես, \*կուլա/կուլակ>քյուլեք, \*ճաղ>ջաղ, \*պատրույգ>բադրուք/մեդիրիք, պարզուն>բարզուն (մածուն, պանիր քամելու տոպրակ), \*սավան>սավան, \*տաշտ>թեշթ, \*ցախավել>սաքքավուլ, \*փարտիչ>փարդիլ/բարդըլ, \*շուրթ>շուրթ (թոնրի կամ ամանի), գրտնակ>քինդիրեք, եփիչ>էփիչ (կաթսա՝ որի մեջ եռացնում են կանեփի թեւերը):

7. Սննդեղեն, ճաշատեսակներ, թվով՝ 16:

աղուն/աղոն>աղուն/աղոն, ապուր>աքուր, պաղապուր>բաղաքուր, \*բաղարջ>փագաչ, բանդակ>բանդաք, բորանի>բորանի, \*գաթա>քեթե, լավաշ>լավաշ, \*լոռի (պանիր)>լուր (փեյնիրի), կլիկ>գըլիք, \*հատիկ>հեդիք (խաշած ցորեն), \*յուղ>յաղ, \*չիր>չիր, \*չորթթու>չորթութու, \*սոխարած>սոխարաչ, \*պաստեղ>բասթըք:

8. Պարատեսակներ (եղգեր), թվով՝ 25:

\*պար>բար, հորան>հորան/հորոն, մի շարք պարեր՝ աղչիկ>անչիք, պարտեզ>բարդըզ, շափ>շափ, լավիկ>լավիք, պատրույգ>քեդիրիք, պզտիկ>քեզդիք, գաթա>քեթե, առատու(ս)>զուզու(մ), դուդումաման, վարդավառ>վարդիվուր, դե շորորա>դեփ շորորա, հոյ նար>օյնար, քաղոց>քաղոս, գովենք>գյովենք, քաշենք>գաշենք, գութանապար>քոթանապար, քեշի>քեշի, քունջութ>գոնջութ, ծափիկ>չափիք/չեփիք, տասնըչորս>դասնիչորս, պռչ>փյոչ, պռչիկ>փռչիք, վար-

ձակ> վարսաղը. ինչպես նաև հայկական անձնանուններով և տեղանուններով պարեր-պարերգեր՝ Գյումրի պար, Համշենի հորան, հին Համշեն (էսքի Համշեն), Տյուրիկ, Մարո, Թելլու:

(Վերևում ընդգծված բառերը տրված են տարբեր բառախմբերում՝ իրենց բառարանային իմաստներով և որոնք հետագայում զեղչված են փոխառյալ բառերի գումարից):

Սկսած «պար» բառից, որն ի հնճուկա պարարվեստի ուսուցիչ և «Պարեր» («Barlar») գրքի հեղինակ Ս. Յ. Աթամանի, ո՛չ թե «միջին ասիական» [22, էջ 27], այլ հնդկարոպական-հայաստական ծագում ունի [25, էջ 108]: Հայկական անվանումներ կրող պարատեսակների, պարերգերի այսքան ճոխ յուրացումը (որը մեր ցանկում ամբողջական չէ հավանաբար) հարևան թուրքերի կողմից, ցանկանում ենք հանձնել մեր երգարվեստի և պարարվեստի մասնագետների ուշադրությանը: Մասնավորաբար «էրմենի բարլարը»—«Հայկական պարեր» բառակապակցությունը՝ որպես խմբական պարանուն, որին մենք հանդիպել ենք [31, էջ 7979], պեճախոս ապացույց է այն մասին, որ թուրքերը բաղմաթիվ պարեր սովորել և օրինակել են հայերից, որոնց մի մասը նըշված է վերևում: Եվ ոչ միայն հայերից՝ այլև հարևանությամբ ապրող լազերից, հույներից և մանավանդ քրդերից: Թվում է, թե՛ «Բասսո», «Հեխիթո», «Ջեյնո», «Քյուրդյուն քըզը» (Քրդի աղջիկը), «Քյուրդ հալասը» պարանունները այդ են հուշում: Մենք շեշտեցինք այս հանգամանքը, քանի որ Թուրքիայից միջազգային բեմ դուրս եկած պարախմբերը այս բոլորը թուրքական արվեստ են ներկայացվում օտարներին:

9. Տարբեր բնույթի բառեր, թվով՝ 63:

աղչիկ> ահլըք, տղա>ղըղա, եղբայր> ահբար, \*թող(ն)> թորուն, պզտիկ> բըզդըք, \*թագավոր> թեքֆուր, \*քավոր> քիրվե, \*տուտու> դուդու, \*մորուք> մորուք, \*կուզիկ> գուզիք, \*փնթի> փընթի, \*ժամկոչ> զանգոչ, \*խաչ> հաչ, կաթողիկոս> քաթագիթոս, վարդավառ> վարդիվոր, \*շալակ> շեխեք, \*պոչ> փոչ, \*պոչիկ> փոչլուք, \*ապրիլ> արբըլ/արբըլ (ամիսը), ապրի՛ս> արբիս, մայիս> մայլս, ապուշ> արուշ, \*ավանակ> ավանաք, կոտոշ> քոդոշ, տասնհինգ> դասնիք, պակաս> բագաս (պակասամիտ), \*կոպիտ> քուբաթ, \*շիլ> շիլ, կոտ/կոտիկ> քոդ/գոդիք, կուրիկ> գուրիք, \*շինիկ> շինիք, \*անդունդ> թանթուն, \*կապան> քեքեն, անթեղ> անթըղ, \*մոծիր> մըջըր, երտ> արըթ/օրդ, զնդակ> զընթաք, \*տեփուր> թեփիր, լափուկ> լեփիփե (տափակ քար), լիկ> լիդ, \*շեն> շեն, \*շիվ> շիֆ, աշուղ> աշուգ, անիծած> անիզադ, \*անուշ> անուշ,

անոշ, ճար>ջար, \*փշուր/փսոր>փուսուր, \*փերթ>փըրթը, \*փոթ>փոթ, ավանդ>ավաթ, \*անարատ>անարաթ, \*դատարկ/դարտակ>դերդեր, խանութ>հանոթ (նաև՝ «հանոթշու», միջնորդ իմաստով), \*խավ>հավ, մեկ>մեք, \*չափ>չափ, \*շերմուկ>շերմիք, \*օրինակ>օրնիք, հակառակորդ>հագարագորդ, փոթորիկ>փեթիփեք, \*սարփինա>սերփենե, մրուր>մուրուր, \*փարթ>փարթ (քաղիթ, փորոտիք):

10. Մի քանի դարձվածքներ և բառաբարդություններ, թվով՝ 12:

ազը քիչ<շատ քիչ, ափազ<ափ+ազ, անդըրա քալասը< \*անտեր մնաս, զըրզըրին կերթաս< «իզուր կերթաս, ոչինչ էլ չես կարող անել» իմաստով), ջըրբըթլը<ճրպոտ/ճպոտ, շերմաք չուր<ճերմակ ջուր, մադիք աթմաք<մատիկ նետել, մեղա ասվազ<մեղա աստված, բաշ էթմեք<պաշել/պաշ անել, գըրզըրլամաք<գլտորել, հանզո<ծո՛, ա՛յ տղա, արուր ջուրուր<ապուր ճուպուր:

Թյուրիմացությունների տեղիք չտալու համար, նշենք, որ մեր ներկայացրած բառերից 51-ը պահլավական, ասորական, խեթական, հունական, արաբական, կովկասյան և այլ ծագում ունեն: Սակայն նախքան հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունները, դրանք անցել են հայերեն լեզվի բառաֆոնդը: Հետևաբար, այդ բառերը անմիջական փոխառություններ են հայերենից՝ թուրքերենում:

«Պարատեսակներ» բառախմբում կրկնված 10 բառերը զեղչելուց հետո, մնացյալ 223՝ բառերը մենք դուրս ենք գրել օգտագործելով արդի թուրք գրականության մոտ 80 աղբյուր: Ակադեմիկոս Հ. Աճառյանը, որն օգտվել է միայն հայկական աղբյուրներից, դրանցից 111-ն արդեն քննարկել և ստուգաբանել է «Հայերեն արմատական բառարանում» [33]: Ուրեմն, մեր պրպտումների շնորհիվ փոխառյալ այդ բառերի քանակն ավելանում է 112 բառով ևս, որոնց մեծագույն մասը թուրք գրականության մեջ սկսել են մուտք գործել երեսնական թվականներից՝ օտարամուտ բառերը թուրքերեն լեզվից զտման տարիներից: 1979 թ. թուրքերեն լեզվի միության նախաձեռնությամբ վեցերորդ տպագրության արժանացած, և հետևաբար, ամենից հավաստի «Թուրքերեն լեզվի (բացատրական) բառարանում» [35], մեր հավաքած 223 բառերից կա միայն 89-ը, սակայն դրանցից նշված է միայն երկուսի՝ «խաշ» և «ժամկոշ» բառերի հայկական ծագումը: Հայազգի բառարանագիր Փարս Թուղլաջըի (Բարսեղ Թուղլաճյան) 1978 թ. երկրորդ տպագրությամբ լույս ընծայած վեցհատորանոց և նույնքան հավաստի ու բարձրարժեք «Ովկիանոս թուրքական հանրագիտական բառարանում» [34] մեր թվարկած բառերից կա 93-ը, որոնցից միայն 29-ի կողքին է նշված հայկա-

կան ժագումը: Նշանակում է, հայերենից փոխառյալ բառերի բառարանային շրջանառությունն արդեն հասնում է բավականին նշանակալի քանակի:

Թվական այս տվյալների հիմքի վրա ինչպիսի՞ ընդհանրացումների և հերակացությունների կարելի է հանգել՝ թուրքերենից հայերեն և ապա հայերենից թուրքերեն փոխառյալ բառերի այժմյան քանակի վերաբերյալ:

Ինչպես ակադ. Հ. Աճառյանն է նշում, տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր վայրերում, հայերենում թուրքերենից բանավոր փոխառությունների քանակը հասել է 1000—4000-ի [1, էջ 272], սակայն, XIX դարի կեսերից հետո, հայ ժողովրդի մշակութային նոր զարթոնքին զուգահեռ, բոլոր այդ բառերը մերժվել են հայերեն գրական լեզվից, որոնցից «20 բառ» օգտագործվում է այժմ [նույն տեղում] (մենք, անշուշտ, այս հաշվի մեջ չենք մտցնում աղբրեջաներենից փոխառյալ բառերը): Իսկ դրա փոխարեն, թուրքերեն գրական լեզվում ներկայումս շատանում է հայերենից փոխառյալ բառերի քանակը: Դրան նպաստում է «հարազատ թուրքերենի» շարժումը, որն սկսվել է երեսնական թվականներից և որի հիմնական նպատակն է՝ թուրքերենից արմատապես արտաքսել նախկին արաբա-պարսկական փոխառությունները: «Մաքրամոլություն» այդ շարժումը շարունակվում է առավել բուռն թափով: «Հետազոտելով հին լեզվական հիշատակարաններ,—գրում է թուրք լեզվաբան էմին Օզդեմիրը,—մեր լեզուն հարստանում է կարևոր մի նախաձեռնության շնորհիվ և վերագտնում իր լեզվական հարազատ արժեքները: Սկսած XIII դարից, ուսումնասիրվել են թուրքերեն լեզվով գրված 227 երկ: Ժողովրդական խոսվածքներից քաղված այդ բառերը, ներառնելով բառարանների մեջ, դրանք ներկայացվում են նրանց, ովքեր սիրում են թուրքերեն լեզուն և ցանկանում օգտվել այդ բառական գանձարանից» [30, № 222, էջ 85]: Համանման միտք է արտահայտում քերականագետ Քեմալ Դեմիրալը. «Տեղական խոսվածքներում,—գրում է նա,—կան այնպիսի բառեր, որոնք օգտագործվում են երկրի մի որևէ շրջանում, մեկուսացված են խոսված վայրերում և դեռևս չեն օգտագործվում ժողովրդի լայն շրջանակների կողմից: Այդ բառերը հավաքում են և ներկայացնում նրանց, ովքեր ցանկանում ին օգտագործել: Եթե բառն ընդունելություն է գտնում, լեզվի բառապաշարը հարստանում է» [5, էջ 139]:

Այսպիսով, Անատոլիայի տարբեր շրջաններից և տեղական բարբառներից քաղված այդ բառերը, որոնք նախ ամփոփվում են գավա-

ռական բառարաններում, ապա տեղ են գրավում առավել զանգվածա-  
յին տպաքանակով լույս տեսնող բառարանների մեջ, հետզհետե մըտ-  
նում են ընդհանուր լեզվի բառաֆոնդը և օգտագործվում և՛ խոսակցա-  
կան, և՛ գրավոր լեզվում: Դրանցից են, օրինակ՝ հայերենից փոխառյալ,  
հերթահերկ, քիրվեքավոր, լիդ<լիկ/լիճ և հեղիք<հատիկ բառերը,  
որոնք ներմուծվել են 1979 թ. «Թուրքական բառարանի» 6-րդ տպա-  
գրության մեջ [35], այնինչ, դրանք չկան նախորդ հրատարակութուն-  
ներում:

Այն «նորաբանությունները», որոնց մի մասը, եթե մի կողմից  
ստեղծվում է թուրքերեն լեզվի ներքին հնարավորություններով, մյուս  
կարևոր մասը ներմուծվում է Միջին Ասիայի թյուրքախոս ժողովուրդ-  
ների լեզուներից, և մասնավորաբար, Անատոլիայի և Արևմտյան Հա-  
յաստանի տարբեր շրջանների խոսվածքներից: Եվ հենց այս շրջանների  
խոսվածքներում է, որ որոշակի տեղ են գրավում հայերենից փոխառ-  
յալ բառերը, որոնք լայնորեն օգտագործվում են նաև գավառային շր-  
ջանների կյանքն ու կենցաղը պատկերող գեղարվեստական երկերում:

Մեր ձեռքի տակ գտնվող թուրք գրականությունից հավաքած 223  
փոխառյալ բառերը դեռ մի մասն են այն ընդհանուրի, որն օգտագործ-  
վում են Թուրքիայի զանազան շրջաններում: Մեր ներկայացրած բառերի  
մեջ չենք ներմուծել Հ. Աճառյանի արմատականում քննված ևս 122 բառ,  
որոնց մենք չենք հանդիպել մեր ընթերցած գրականության մեջ, որոնք  
չկան նաև արդի թուրքական բառարաններում, և դրանք ընդհանրապես  
վերաբերում են բանավոր փոխառություններին: Նույն շարքին են պատ-  
կանում լամիլ>լեմիլ, հեծան>հեզան, փունջ>փունչ բառերը, որոնք,  
1980 թ. օգոստոսին Անտիոքից հյուր եկած պ. իս. Գաղըյանի հավաս-  
տումների համաձայն, մեր թված մոտ 30 այլ բառերի կողքին այժմ  
օգտագործվում են շրջանի թուրքերի կողմից:

Ջանց առնելով բանավոր փոխառությունների 129 բառ (որոնց  
զգալի մասն օգտագործվում է թուրքական գեղարվեստական արձակում),  
ներկայացնում ենք միայն գրական-բառարանային փոխառությունների  
94 բառ՝ համապատասխան թուրքական աղբյուրներով:

Թուրքական գրականությունից վերցրած և ընդգծված փոխառյալ  
բառն իր մեջ բովանդակող նախադասությունները տրված են թուրքերեն  
լեզվով, որոնց հայերեն թարգմանության կողքին նշված է աղբյուրը՝  
ըստ «Մանոթագրություններ»-ի: Թուրքական երեք բառարաններից  
դուրս գրված փոխառյալ բառերի նշանակությունները տրված են հայե-  
րեն թարգմանությամբ:

Բառերի ծագման և ստուգաբանության համար, մի շարք հայերեն և օտարալեզու բառարաններում որոնումներ կատարելուց հետո, հիմնականում մեզ ուղեցույց ենք ընտրել ակադ. Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը»:

94 բառերից (որոնց 44-ը հայերենից փոխառյալ են նաև տարբեր լեզուներում՝ քրդերենում, վրացերենում, պարսկերենում և այլն) 46-ը հնդեվրոպական ծագումով բնիկ և կամ ածանցավոր ու բարդ հայերեն բառեր են, 21-ը հայերենում հնում փոխ առնված բառեր, իսկ 27-ը չմեկնված բառեր, որոնցից 10 բառ Փարս Թուղալըրի «Օթյանուա» [34] բառարանում նշված են հայկական ծագումով:

Ահա այդ 94 բառերը՝ ալբուրենական կարգով.

անաճ>անաչ „[Çoban] koyunları otarırken bir gün *anaç* koyunu sağına *ğetirir*.—“ [Հովիվը] մի օր, ոչխարներին արածելիս, մի անաճ ոչխար է բերում, աչ կողմը դնում» [31, № 347, էջ 8351]:

«Անաչ» բառը Թուրքերենում բաղմիմաստ բառ է. 1) ծննդաբերելու ի վիճակի մայր, անասուն, մրգատու ծառ, 2) միջին տարիքի հասուն կին, 3) բնավորությամբ և կազմով՝ մոր նմանվող, 4) խոշոր, դախացած, 5) ծերունի, 6) մայրացած, շատ վառեկներ ծնած հավազգի, թռչուն և կաթնատու անասուն, որն այլևս ծննդաբերելու կարողությունից զրկված է, 7) շամուանացած, ծերացած կույս, և այլն [34, 35, 36]: Առաջին երեք իմաստներով Թուրքերեն բառ է, որ կազմված է *ana*+*ç* (անա+չ)՝ մայր և չ գոյականակերտ ածանցով [10, էջ 41] և համապատասխանում է առաջին երեք իմաստների բացատրության: Հաջորդ 4, 5, 6 և 7-րդ իմաստներով համապատասխանում է հայերեն «անաճ» բառի ժխտական առումներին, և այս դեպքում, փոխառություն է հայերենից:

անդունդ թանթուն. «սպանել», «մեռցնել» կամ «փորձանքի ենթարկվել» իմաստներով օգտագործվում է «Թանթունա գիթմեք»—«Թանթունի գնալ» (աանդունդը ընկնել) դարձվածքում [34, 35]:

անիծ>անըգ. «անիծ ոչիլը. հունձից հետո խոզանների վրա գոյացող և մարդկային մարմնի վրա քոր առաջացնող փոքր միջատ» [34, 35, 36]:

անկուտ/ի/>անգըր/անգուլի/անգուր. 1) «բադի նմանվող, կղմիտրագույն, վայրի թռչուն, որը կարելի է ընտանեցնել», 2) «պնդադուլս, ապուշ, անբան» [34, 35], 3) «մի տեսակ առանց կորիզի (անկուտ) թութ» [36]:

անուշ>անուշ/անուշ. «սիրելի», «մտերիմ» [33]: „Bir az daha da-

yan, anox, dedi Dilan"—"Մի քիչ էլ համբերիր, անոշ,—ասաց Դիլանը | 19, էջ 8 |,

աշուղ>աշուգ. «հայ ժողովրդական բանաստեղծներին տրված անուն» [34]; «Ermeni Aşug'larının isimleri ve kullandıkları musiki aleti». —«Հայ աշուգների (աշուղների) անուններն ու նրանց օգտագործած նվագարանները...» [13, էջ 268];

ապարահ>աբարա. «չրի ճանապարհ՝ արտերի մեջ» [36];

ապուր>աբուր. օգտագործվում է «աբուր ջութուր» արտահայտության մեջ՝ խառնիխուռն կերված բաներ, տեղի անտեղի խոսք, գործ, արարք իմաստներով [34, 35]; նաև՝ պաղապուր>բաղաբուր. «Լոբուց և ծեծած ցորենից պատրաստվող, խյուսի նման թանձր ճաշ. հարիսա» [36, հ. II, էջ 473];

առաստաղ>աբասքաք. հ. ծ. բ. [34], «Dam kesiklerine arastak da denir» —«Կտուրի գերաններին առաստաղ էլ են ասում» [23, էջ 92], Տե'ս նաև «մարագ» բառը;

առեղ/ը/>աբգալ/աբգել/աբքալ. 1) Arkaç: Dokuma tezgâhlarında enine atılan iplik —«Հյուսվածեղենի դազգահներում լայնքին ձգվող դերձանին առեղ ասում են» [10, էջ 41], 2) «Հյուսվածեղենի դազգահներում մագոզի մեջ դրված դերձանը» [36];

ավանակ>ավանաֆ. հ. ծ. բ. [34], նշանակում է «քուռակ». փխբ. «հեշտ խաբվող, միամիտ, անբան» [34, 35]; «Elinin kordüydü, avanak» —«Գրողի ծոցը, ավանակ» [14, էջ 7];

ափ>ափազ. 1) հ. ծ. բ. [34], նշանակում է՝ «մի ափի չափով, լիքը լուով», 2) «Hapaz, apaz (Erm.): Ele geçirilmiş, bahşis» —«հափազ, ափազ (հայերեն բառ է). ձեռք բերված որևէ բան, նվեր (մաշարիչ)» [31. № 309, էջ 7289], 3) ափազ՝ նշանակում է «ապտակ» [36];

Գավառական թուրքերենում «ազ» նշանակում է՝ մի բանի ներսի կողմը [36];

բաղիկ>բաղիֆ. «բաղի, սագի և նման հավազգիների ճուտ, ձագ» [35];

բազուկ>փազու/փեզիֆ. «ճակնդեղի տերև» [33, 34]; «Bostan pezik degil mi? /Yüreğ ezik degil mi?» —«Սա բազուկի բոստան է՞, Իսկ իմ սիրտը տրտում չէ՞» [31, № 279, էջ 6460];

բանջար>փանջար. հ. ծ. բ. [34 և 2, էջ 308]; Տե'ս նաև «մարագ» բառը;

բորանի > բորանի «Բրնձով և շոմինով և կամ նման մի բանջարեղենով, վրան մածուն լցրած ճաշատեսակ» [34, 35]: „Perper boranına sarmısaklı ayran katılır“ — «Փրփրեմով պատրաստած բորանու վրա սխտորով թան են լցնում» [23, էջ 39]:

«... և բորանին նույնպես պաս օրվա ուտելիք էին» [27, էջ 97]:  
գաթա > քեթե. «Kete: Ekşimiş veya ekşimemiş hamurdan yapılan bir çeşit çörek. Umumiyetle yuvarlak olarak yapılır «Գաթան թթու կամ անթթու խմորով պատրաստվող մի տեսակ կարկանդակ է: Ընդհանրապես կլորածե է լինում» [31, № 359, էջ 8676]: Որպես պարատեսակ կա նաև՝ „Kete oyunu“ — «Գաթայի պար» [31, № 331, էջ 7907]:

գամ > ֆամ. հ. ծ. բ., 1) «ղաշույն», 2) «ծառի բունը ճեղքելու համար օգտագործվող սրածայր, տափակ, լայն գամ՝ սեպ» [34]:

գուրան > քուրան. Nasıl *kotan hopu* toprağı yarararak *evelğin* kökünü ezer, çıkarır, beylğin de öyle kökünü kazıp çıkarmak gerekir — «Ինչպես որ գուրանի խոփը հողը ճեղքում և ավելուկն իր արմատով տրորում, պոկում է, նույնպես անհրաժեշտ է բելբրի արմատը փորել, տեղից շարտել» [19, էջ 37]: Նաև՝ որպես պարատեսակ. «*Maro ve kotana harları* oynayanlar bu gün pek kalmamıştır.» — «Այսօր, Մարոյի և գուրանի պարերը պարողներ համարյա չկան» [22, էջ 55]:

գուռ(ն) > քուրնա. „Taş *kuruna* kırk yıllık şarap dökerек“ — «Քառասուն տարվա գինին քարե գուռին թափելով...» [31, № 137, էջ 2285]:

դարակ > քեթեք. „Elindeki kurulama bezini ocak gerisindeki ipe astı ve kop—*teregin* yanındaki aynaya bir göz attı“ — «Զեռքի սրբիչը օջախի ետևում գտնվող առասանին կախեց և մի հայացք գցեց խուլ (պատի մեջ փորված) դարակի քովը գտնվող հայելուն» [27, էջ 32]:

դուռգոց > քրքաւ. «դռան մղլակ, սողնակ» [34, 35]:

եղբայր > անքար. հ. ծ. բ., [34]:

էլ/իշակ > էլեֆ. [34, 35]:

թագավոր > քեթքուր. հ. ծ. բ. [34]: „...ayrıca, Ermeni tekfurı da...“ — «...բացի դրանից, հայոց թագավորն էլ...» [13, էջ 254]:

թել > թել. «Դերձան, լար» [34, 35]: 1 — „*Telis: Bitkisel tellerden* seyrek örülü büyük torba“ — «Թաղիսը (թաղիք) բուսական թելերից ցանցառ կերպով հյուսված մեծ տոպրակ է» [23, էջ 87]: 2 —

„Elektrik nakleden tellerdeki iplikleri ve kauçukları doyuncaya kadar yedi“—«Մինչև փորը կշտանալը, էլեքտրական հոսանք փոխադրող լաբերի մետաքսենին ու կաուչուկները կերավ...» [21, էջ 54]:

բոռ/ն/ > բոռում. [34, 35]:

բրբուր > բրբբբբ/բրբբբ. „Turtıl da yaptıkları yer. Eskiden dalları sallıyarak turtılı dökerlerdi“—«Բրբուրն էլ տերևներն է ուտում: Հնում, բրբուրները վալր գցելու համար ճյուղերը թափ էին տալիս» [23, էջ 20]:

քևք > քելիք. „İlkbaharda, kışın soğğundan korumak gayesiyle, taşlarla bastırılmış tevekler kaldırılır — «Գարնանը, ձմռան ցրտից պաշտպանելու նպատակով քարերով ծածկված քևքերը բարձրացնում են» [23, էջ 19]:

ծամկոչ > զանգոչ. հ. ծ. ք. [34, 35]: „Zangoç, çanın iplerini çektiği için“ — «Ծամկոչ է, քանի որ զանգի պարաններն է քաշում, [9, էջ 98]: „Jamgoç Varujan'ın geldiğini gördü“ — «Տեսավ, որ ծամկոչ Վարուժանը գալիս է» [3, էջ 57]:

իլ/իլիկ > իլ/իլիկ. „Ağırsak: İgin alt ucuna takılan değirmi ağırlık“ — «Թեշիկ է կոչվում այն բոլորակաձև ծանրութունը, որն անցկացնում են իլի ներքևը» [23, էջ 51]: «Էլիկ՝ քարման է կոչվում այն գործիքը, որի միջոցով բուրդ են մանում» [36, հ. V, էջ 1716]:

լավաշ > լավաշ. «Էրզրումի և Կարսի ժողովրդական լեզվում՝ թոնրի վրա եփվող բարակ հացին լավաշ են ասում» [31, № 178, էջ 3410]: Տե՛ս նաև «լոռ» բառը:

Թուրքերենում l (ինչպես նաև չ և r) տառով սկսվող բառ չկա [24, էջ 26]: Ըստ այսմ, Թուրքերենում l-ով սկսվող բառերը, բացի բնաձայններից, բոլորն էլ փոխառյալ են օտար լեզուներից:

լիկ/լիճ > լիկ. «Կամի և ավազի ցեխակույտ, տիղմ, որը բերում և թողնում են հեղեղները» [35]:

լող > լող. «Քարե գլան, որն օգտագործում են ճանապարհների, կտուրների հողը ճնշելու, կամ արտերի հողերը տրորելով հարթելու համար» [34, 35]: „Çıktım dem loğlamaya/İndim yar yollamaya“ — «Ելա կտուրը լողով հարթելու ծած իշա լարիս ճամփա դնելու» [Ժող. երգ: Թուրք երգիչ Բուհի Սու-ի երգապնակների ծրարի վրա տպագրված սողերից: „Loğtaş gibi yuvarlanmaya başladı“—«Սկսեց լողքարի պես գլորվել» [20, էջ 312]:

լոռ (պանիր) > լոր փեյնիրի. «Թարմ, փափուկ և անալի պանիր» [34, 35 և 32]: Zübeyt beyin ortalanca karısı bir topak loru, iki la-

vas ekmeği ile atar gibi attı önüne"—«Զուրբիթ բելի միշնեկ կինը (հրեքից երկրորդը. ծնթ. Խ. Ա.) երկու լավաշ հացի հետ մի գունդ լոռը նետելու պես նրա առաջը գցեց» [1, էջ 77]:

խաշիլ>հաշըլ. «Տեքստիլագործության մեջ օգտագործվող ալյուրի կամ շրեշի լուծ» [34, 35]:

խաշ>հաշ. հ. ծ. բ. [34, 35]: «Altın haça elimi basarım»—«Ոսկե խաչի վրա ձեռքս կդնեմ» [11, էջ 63]: Պատմական երկերում օգտագործվում է «հաշը սեֆերլերի»—«խաչակիրների արշավանքներ», իսկ գավառներում խաչերկաթ>հաչիրգեթ բառը [31, № 245, էջ 5492]:

խավ>հավ. «Կերպասների և թավշյա կտորների մակերեսին վրա նուրբ, բարակ աղվամազ» [34, 35]:

կաճ>քչե. «Halı yayılmazsa, yerine keçe ve palaz, ya da kilim veya *cicim* serilir»—«Եթե գորգ չեն փռում, դրա փոխարեն քաղիք (կաճ) կամ փալաս և կամ կապերտ կամ ցեմիմ են փռում» [23, էջ 6]: Տես նաև՝ «պոչիկ» բառը:

կարաս>ֆերես. «Մեծ և խորը քարենավ (խավյակ)» [34, 35]: «Hamur kersen!»—«Խմորի կարաս» [31, № 189, էջ 3515]:

կափանք/փականք>քեփենք. հ. ծ. բ. [34]: «...akşam üstü dükân kaparken... kepenkleri indirdi»—«...երեկոյան, խանութը փակելիս... փականքները (փեղկերը) իջեցրեց» [21, էջ 52]:

կոպիա>քուբաթ. հ. ծ. բ. [34]: «Karı benden cahil, üstelik *ku-bat*»—«Կինը ինձանից էլ տգետ է, առավել ևս կոպիա է» [14, էջ 15]:

կոպառն>քոֆթյուն. «Արշառներին տրվող բամբակի կամ շուշ-մալի սերմերի մնացորդ, կեր» [34, 35]:

կուլա/կոյլակ>քուլեք. «Filito'nun anası köpüklü süt *küleğini* evin köşesine koydu»—«Ֆիլիթոյի մայրը, փրփրալի կաթի կուլան դրեց տան անկուռնը» [18, էջ 159—160]:

կոտոշ>քոգոշ/գոգոշ. հ. ծ. բ. «եղջուր» և փխբ. «կավատ» իմաստներով [34]: «Ülen Aşır, ben demedim mi ki bu hacı *godosun* ta kendisi!»—«Տո՛ Աշիր, ես չասացի՞, որ էս Հաշին իսկական կոտոշ է...» [6, էջ 20]: «Bu sakallı *godos* boş veriyor, kardeşim»—«Էս միրուքավոր կոտոշը մեզ բանի տեղ չի դնում, աղբերս» [15, էջ 39]:

կորնգան>ֆարնգա. «վայրի առվույտ» [35]:

հառիկ>հեդիֆ. խաշած ցորեն [35]:

հակառակորդ>հագարագորդ. հ. ծ. բ. «բռնավոր, դավաճան. բե-մում՝ ախոյանի դերով հանդես եկող (դերասան)» [34]: «Hagaragortçai davranmak olmaz»—«Պեսք չէ հակառակորդի պես վերաբերվել»:

(Հեքիաթագիր Վ. Իմալլանը 28 հունիսի 1980 թ. նամակով մեզ հայտնեւ է, թե ալբ խոսքն օգտագործել են թուրք գրողներ Նազրմ Հիքմեթըն ու Քեմալ Թահիրը՝ իրենց փոխադարձ նամակներում):

հերկ>հերք. „Bahar herklerinden... kirlarda geceleyenler...“ — «Գարնանալին հերկերի ժամանակ... դաշտերում գիշերողները...» [20, էջ 308]:

հյուլ/խուլ>հուլ. „Tarlalar içinde evler var... kerpiç evler, huşlar“ — «Արտերում տներ կան... հողաղլուսից շինված տներ, հյուղեր» [16, էջ 20]:

հոտալ>հոդաք. „...eskiden ovayı dolduran hodak seslerini şimdi traktör seslerini aldı“ — «...նախկինում դաշտերում արձագանքող հոտաղների կանչերին ավժա տրակտորի աղմուկներն են փոխարինում» [19, էջ 25], «հոտաղը հալերեն բառ է» [18, էջ 25]:

հորան>հորան. «Սև ծովի շրջաններում քեմանչի նվագակցությամբ կատարվող ժողովրդական պար» [34, 35], „Bazı horanlarda, kemençe veya armonika çalarak oynanan oyunlarda...“ — «Մի շարք հորաններում... քեմանչի կամ արմոնիկայի նվագակցությամբ խաղացվող պարերում...» [22, էջ 102]:

հաղ>ջաղ. „Dilan bir köşeye bir çulun üstüne oturmuş çorap örüyordu. Elindeki *caglar* oynatıyor birbirine cıve yapıyordu“ — «Դիլանը, անկյունում, մի քուրջի վրա նստել, գուլպա էր հլուսում: Ձեռքի մաղերը խաղում, իրար դարպասում էին» [19, էջ 24]:

հերմակ-ջուր>ջերմաֆ-ջուր. հ. ծ. բ., «օղի» նշանակությամբ [34]:

հիլ>շիլ. «արմատների վրա առաջացող մալի պես նուրբ ընձյուղներ» [34, 35]:

մայիս>մայրս. «մայիս ամիսը» [2, էջ 321]:

մատիկ>մադիք. հ. ծ. բ. [34]: „Mat: Ermenice parmak demektir. *Madik*, küçük parmak demektir. *Madik* oynamak da: Zıpzıp oynamak demektir... *Madik* atma işi de dikkat, incelik istediği için, mecazi olarak *madik atmak*, *madik etmek*, *madik oynamak* sözleri dalavera, hile anlamlarına gelmektedir“ — «Մաթ՝ հալերեն մատ է նշանակում: Մատիկ՝ փոքր մատ: Իսկ մատիկ խաղալ՝ քարեգնդիկ խաղալ: Մատիկով քարեգնդիկ խփելը (նետելը) ուշադրություն, նրբություն է պահանջում, դրա համար էլ մատիկ նետել, մատիկ անել, մատիկ խաղալ արտահայտությունները, փոխաբերաբար, նշանակում են՝

խարդախել, հնարամտորեն խաբել [31, № 246, էջ 5011]։ Տե՛ս «փրն-թի» բառը։

մարագ>մբքբք. „Türkçe'de Ermeniceden gelen bir takım sözler vardır: *pancar*, *petek* gibi. Anadolu ağızlarında kullanılan *aristak*, *merek* sözleri de Ermenicedir“ — «Թուրքերենում հայերենից փոխառ-լալ մի շարք բառեր կան. ինչպես՝ բանջար, փքթակ։ Անատոլիայի խոս-վածքներում օգտագործվող առաստաղ, մարագ բառերն էլ հայերեն են» [29, էջ 11—12]։ Այս տողերի հեղինակը թուրք լեզվաբան Հասան Էրենն է։ Փոխառյալ բառերը ոչ միայն օգտագործվում են «Անատոլիա-յի խոսվածքներում», այլ մուտք են գործել թե՛ ընդհանուր բառա-րաններում և թե՛ գեղարվեստական գրականության մեջ. օրինակ՝ „*Merekten yana yürüdük*“ — «Բալլեցիք մարագի ուղղությամբ» [18, էջ 76]։ Մյուս բառերի համար օրինակներ բերված են համապատաս-խան տեղերում։

մարգակ>մբքբք. հ. ծ. բ [34]։ „Bir yandan temeller kazılıp kerpiçler konuyordu, bir yandan *mertekler* yolunup tahtalar biçili-yordu“ — «Մի կողմից հիմքերն էին փորում, հողաղյուսները շարում, մյուս կողմից մարգակներ էին տաշում, տախտակներ պատրաստում» [20, էջ 78]։

մոզի(կ)>մոզաք/մոզիք/մոզքք. „Karanlıkta ineklere, *mozi*klara çarpa çarpa ahırın kapısını buldu“ — «Մթության մեջ կովերին, մո-զիներին խփվելով, խփվելով, ախոռին դուռը գտավ» [17, էջ 157]։

մոծիք/մնիք/մնճուք>մուջուք/մըջըք. հ. ծ. բ. «ածուխի կտորներ՝ փշուրներ» նշանակությամբ [34]։

մորուփ>մորուփ. հ. ծ. բ. «Մերունի, տարեց տղամարդ» նշանա-կությամբ [34]։ „*Moruk* sağ olsaydı bunu beş bine de, on bine de vermezdi“ — «Եթե ծերուկը ողջ լիներ, հինգ հազարի էլ, տաս հազարի էլ չէր վաճառի» [12, էջ 383]։ „Ermenilerin de bir zamanlar devlet kurdugu güney illerimizde halk dilimize karışan Ermenice kelime-ler bulunmaktadır. Bunlardan Silifkede halâ söylenmekte olanlar şunlardır: *örnek*, *moruk* (ihtiyar, sakalli), *keben* (dağlardaki dar ve dik geçit)“ — «Մեր հարավային նահանգներում, որտեղ մի ժամանակ հայերը պետութիւն են հիմնել, մեր ժողովրդական լեզվին անցել են հայերեն բառեր։ Սիլփկիայում դեռևս դրանցից օգտագործված բառերից են հետևյալները. օրինակ, մորուք (ծերուկ, մորուքավոր), կապան (նեղ և ցից լեռնանցք) [31, № 155, էջ 2762]։

մարն>մարչ. հ. ծ. բ. բետոնի վրա ծակ բացելու համար օգտա-

գործվող սրածայր գործիք» նշանակությամբ [34]։ „Murcu, çekici getir“ — «Մուրքը, չաքուճը բեր» [8, էջ...?]:

յուղ>յաղ. „Agop usta...yazma mendilini...ceketinin kayış gibi yağlı yakasından” geçirildi... — «Վարպետ Հակոբը...իր տպածո թաշկի-նակը... յուղ կապած և կաշվի պես կարծրացած բաճկոնի օձիքի վրայից անցկացրեց (ծոծրակը որբելու համար)» [21, էջ 165]:

շեն>շեն. „Allah şen etsin, biz eksilttik, Allah artırsın” — «Աստ-ված շեն պահի, մենք պակասացրինք, աստված թող ավելացնի» [18, էջ 30. տես նաև՝ 2, էջ 308]:

շիլ>շիլ. Այս բառը թուրքերենում օգտագործվում է երկու իմաս-տով. ա) «անդամալուծ». այս դեպքում արաբական փոխառությունն է. օրինակ՝ „Elin ağağın şil ola” — «Ձեռքից ու ոտքից անդամալուծ դառնաս» [31, № 232, էջ 5130], բ) «շիլ» իմաստով, որը հարկական փոխառություն է. օրինակ՝ „İki gözden şil olasin” — «Երկու աչքերդ էլ շիլ դառնան» [31, № 234, էջ 5179]:

շինիկ>շինիֆ. «արմտիքի կշռաչափ» [34, 35]։ „Bu tarla için tam bir şinik altın gerek” — «Այս արտի համար ուղիղ մեկ շինիկ ոսկի է հարկավոր» [21, էջ 118]:

չափ>չափ. հ. ծ. բ. է հետևյալ նշանակություններով. 1) «Արժեք, չափ, տրամագիծ» [34, 35], 2) «լայնք, հասակ» [36]։ „Keran 25—30 cm çapında yanları düzeltilmiş ağaçlardır” — «Գեթաճենքը 25—30 սմ չափով (լայնքով) հարթեցրած տախտակներ են» [23, էջ 8]։ Որ-պես պարտեսակ՝ «չափ բար<չափ պար» [31, № 330, էջ 7878]:

չիւր>չիւր. «Միրանի, սալորի, նման մրգերի շորացրածը» [34, 35]։ պատին>բաղըչ. հ. ծ. բ. «այն պատյանը, որի մեջ գտնվում են բակլայի, լոբու, ոլոռնի նման թարմ բանջարեղենների սերմերը» [34]։

պաստեղ>բասթըֆ/բասթուղ. հոմանիշն է թուրքերեն «փեսթիլ» բառին. այս և հայերեն «պաստեղ» բառերի ծագումը հունական է, սա-կայն թուրքերեն «բասթըղ» և նման ձևերը հայերենից են փոխառյալ։ Օրինակ՝ «Bağ varsa üzümleli dererek şiresiyle bastık yapılı» — «Ալյի ունեցողները խաղողը ճգմամ, խաղողուղով պաստեղ են պատրաստում» [23, էջ 95]:

պար>բար. «Մի տեսակ պար, որը ձեռք-ձեռքի բռնելով պարում են Անատոլիայի արևելյան, առավելապես էրզրումի շրջանում» [34, 35]:

պարան>բարան. «Որթատունկի, մրգատու ծառերի շարք» [34, 35]:

„Bizim bag̃ beş barandır“—«Մեր ալգին հինգ պարան (որթատնկի շարք) ունի» [36]:

պզտիկ>բըզզըբ. հ. ծ. բ. է և օգտագործվում է «փոքր տղա» իմաստով՝ որպես «կատակ» կամ «արհամարհանքի» արտահայտություն [34, 35]: „Bir sürü Ermeni bizdiklerinin yedig̃i halta bakın“—«Մի խումբ հայ պզտիկների կերած ապուրին նայիք» [28, էջ 1]: Որպես պարանոսակ կամ խաղ՝ „Bizdik oyunuu“—«Պզտիկի խաղ» [31, № 166, էջ 3049]:

պռչ>փռչ. հ. ծ. բ. է, «պոչոսկր» նշանակությամբ [34]:

պռչիկ>փռչլուփ/փռչլիփ. 1) (փխբ. «սիգարետի մնացորդ, կճատ» նշանակությամբ. „Sigarayı sigaradan ateşledi. Ağızlığın ucundan aldığı pöçüğü yatağın yanındaki karalı kecenin üstüne ezdi, söndürdü“—«Սիգարետը կպրքեց սիգարետից: Ծխափողի ծայրից վերցրած պռչիկը (կճատը) անկողնու կողքը գտնվող խուհացած-սեացած թաղիքին (կանին) վրա ճգմեց, հանգցրեց» [19, էջ 57], 2) որպես պարավեստի տերմին. „Barlar: Barbaşı denilen, elinde mendil (çevre) tutan en usta oyuncu yönetir... Sıranın en sonundaki oyuncuya da Poççık adı verilir. Poççık, kuyruk demektir“—«Պարերը ղեկավարում է ձեռքին ծաղկավոր թաշկինակ բռնող և ամենավարպետ պարողը, որին Պարավուլիս են անվանում... իսկ շարքի ամենավերջում գտնվող պարողին էլ Պռչիկ են անվանում: «Փռչիք» բառը պռչ է նշանակում» [22, էջ 27]:

ջերմուկ>չերմիք. հ. ծ. բ. [34]: „Bizim ılıca, sizin dilde kaplıca dedikleri „cermik suları“—«Ջերմուկի ջրեր, որին մենք ըլըջա (զուլ ջրեր) ենք ասում, իսկ ձեր լեզվով դուք ասում եք քափըջա (բառացի՝ փակ, ծածկած ջրեր. Ու. Ա.) [4, էջ 23]:

ջրորգան>չրորքեն. հ. ծ. բ. [34]:—«Çörten: Pınar veya damdan su akıtan ağaç veya teneke oluk“—«Ջրորգան են կոչվում փայտե կամ թիթեղե ալն խողովակները, որոնք անցկացնում են աղբյուրների կամ կառույների, և որոնցից ջուրը հոսում, գնում է» [36]: Ավելի մանրամասն՝ տես նաև [30, № 330, էջ 236]:

տաշտ>քեշք/դեշք. «սպիտակեղեն լվալու կոնք» [34, 35]: „Pekmez: Kaynatılıp koyulaştırılmış üzüm şiresinden üzümleri çigneye çigneye çıkarılan şire test'te toplandıktan ve murur denen tortusu dibe çöktükten sonra...“—«Ռուպ պատրաստելու համար, եռացրած և թանձրացրած խաղողի խազմուղի միջի մնացորդ հատիկները ճգմում

են, նոր ստացված խաղաղը մի տաշտի մեջ են հավաքում և մրուր կոչված դիրտը հատակին նստելուց հետո...» [23, էջ 38]:

տասնհինգ>դասինիք. հ. ծ. բ. է՝ «կավատ» նշանակությամբ [34]:

տավար>դավար. 1) «ոչխարի, այծի, ինչպես նաև արջառի նման բնտանի կենդանիների հոտ», 2) «նման կենդանիների ընդհանուր անվանումը» [34, 35]:

տափան>թափան. „Tapan: Tarlaya atılan tohumu toprak a örtmek için gezdirilen ağaçtan, geniş, yassı alet...” — «Տափան են անվանում փալտե աֆն լաֆն գործիքը, որն օգտագործում են շաղ տրված սերմը հողի մեջ ծածկելու համար» [23, էջ 110]:

տեփուր>թեփիր. „Tepir Ağaçtan yapılmış kalbur biçiminde kenarlı tepsi gibi bir kaptır” — «Տեփուրը փալտե, մաղի ձևով, շուրթ ունեցող սկուտեղի նման մի աման է» [23, էջ 88]: „Bugday içinde taşların kalmaması için tepir edilir” — «Յորենի քարերը ջոկելու համար տեփուր են օգտագործում» [23, էջ 88]:

տուտու>դուդու. 1) «հենում՝ կանանց տրված պատվանուն», 2) «ծեր, հայ կին» [34, 35]:

փառ>բար. «ապակյա ամանների կամ լեզվի վրա նստող կեղտ» [34]:

փշուր/փսուր>փշույրու. «մարդու և կենդանու բնական կղկղանք». օգտագործվում է «բոքու փշույրույու» դարձվածքի մեջ, որ նշանակում է՝ «դժվար լուծելի գործ, անհաճո մարդ» [34, 35]: «Ապավառ կամ աղբ» նշանակություն ունի նաև հայերենում. [33, տե՛ս «փշուր» բառը]:

փռ>փոք. հ. ծ. բ. է՝ «հագուստի ծալք» նշանակությամբ. [34]:

փեթակ>փեթեք. տե՛ս «մարագ» բառը և [2, էջ 308]:

փեթ>փրթը. հ. ծ. բ. է՝ «անարժեք, մաշած» նշանակությամբ և ընդհանրապես օգտագործվում է «լըրթը-փըրթը» կրկնավորի մեջ՝ «պատռած-մաշած» շոր, կտորեղեն իմաստով. [34]: Նշանակում է նաև՝ „Pamuklu mensucat” — «բամբակի կերպասեղեն» [31, № 178, էջ 3410]:

փնթի>փինթի. «վերին աստիճանի ժլատ, գժում» [34, 35]: „Gazetecilerin pintiliklerinden, kitapçıların madiklerinden uzak ve serbest yaşıyorum” — «Լրագրավաճառների փնթիությունից (գժմությունից) և գրավաճառների մատիկներից (խաբուսություններից) հեռու և ազատ եմ ապրում» [35]: Տես նաև «մատիկ» բառը:

քավոր>քիրվա/քիրվա. „Zadik usta da benim *kirvem* oldu”

—Վարպետ Զատիկն էլ իմ քավորը եղավ» [18, էջ 82]:

բարման > փրման/փրմեն. «բուրդ մանեկու ծառայող փայտե իլիկ» [34, 35]:

բարուկիր/բարկիր > ֆարգիր/ֆյարգիր. «քարից կամ աղյուսից կառուցված (շենք, տուն և այլն)» [34, 35]:

օրինակ > օրենք. հ. ծ. ք. է՝ նույն նշանակություներով [34]: Տե՛ս նաև՝ [30, № 274, էջ 602] և «մորուք» բառը:

Փոխառյալ բառերի հնչյունափոխության և տառադարձման մի փանի օրինաչափություններ

Թուրքերենում հայերենից փոխառյալ բառերի տառադարձման օրինաչափությունները ճշտելու հարցը չափազանց բարդ է, քանի որ առաջ բառերը փոխառնված են Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանների տարբեր բարբառներից: Նույն հայերեն բառը ոչ միայն արտասանվում է հայկական տարբեր շրջանների տեղական խոսվածքների յուրահատուկ օրենքներով, այլա, փոխառյալ նույն բառը հնչյունափոխվում է տեղի թուրքական խոսվածքի յուրահատուկ օրենքներով: Օրինակ, հայերեն «պատիճ» բառը, որը հայկական տարբեր խոսվածքներում արտասանվում է բաղին, բառին, բաշիդ, բոլիշ, բաղինջ, բ՛աղինջ, պաճուն և այլ ձևերով [33], թուրքական խոսվածքներում էլ արտասանվում է՝ բաղըջ, բաղըշ, բաղիշ, բաղընջ, բաղիս և այլ ձևերով [36]:

Զանց առնելով բարբառային և միջբարբառային փոխազդեցությունների հարցի լուծումը, որն այս աշխատանքի հիմնական նպատակների հետ անմիջականորեն չի առնչվում, մենք կջանանք ճշտել փոխառության որոշ օրինաչափություններ՝ իրար հետ համեմատելով հայերենի գրական և հայերենից թուրքերենում փոխառյալ բառերի գրական-բարբառային ձևերը:

Այս հարցում, առաջին հերթին, դեր են խաղում հնչյունափոխության երկու հիմքեր.

1) Արևմտահայերենի խլազուրկ երկաստիճան բաղաձայնների համակարգը:

2) Թուրքերեն լեզվի ձայնավորների ներդաշնակության օրենքը:

Զայնեղ բաղաձայնների շնչեղացում.—Արևմտահայերենի երկաստիճան բաղաձայնների համակարգում այ, տ, կ, ճ խուլերն արտասանվում են ք, դ, գ, չ ձայնեղների նման: Իսկ ք, դ, գ, չ ձայնեղներն արտասանվում են՝ փ, ք, ֆ, չ շնչեղ խուլերի նման:

Քանի որ հայերեն բառերը փոխ են առնվել Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի տարբեր շրջաններում, ապա այդ փոխառյալ բառերը հնչյունափոխվել են արևմտահայերենի խլաղուրդ երկաստիճան բաղաձայնների համակարգի օրինաչափությունների համաձայն (դրան հակասող շեղումները հետևանք են հայկական կամ թուրքական տեղական խոսվածքների առանձնահատկությունների):

Այս հանգամանքը, իր հերթին, հանդիսանում է փոխառյալ բառերի ծագման և ստուգաբանման օժանդակ հիմքերից մեկը: Օրինակ, տարբեր հեղինակների կարծիքով [34, և 2, էջ 308] «գութան» բառը թուրքերենում վրացիներից է փոխառյալ: Հենց այստեղ էլ մեզ օգնում է արևմտահայերենի երկաստիճան բաղաձայնների համակարգը: Հայերեն «գութան» բառը, որն ըստ ակադ. Հ. Աճառյանի կովկասյան ծագում ունի, վրացերենում ունի «գութանի» ձևը [33]: Հայերենում և վրացերենում, ուրեմն, բառն արտասանվում է «գ» ձայնեղ պայթականով, իսկ արևմտահայերենում, ուղղագրությունն անփոփոխ մնալով հանդերձ, համաձայն վերոնշյալ համակարգի, արտասանվում է «ք» շնչեղ-խուլ պայթականով, որի հետևանքով էլ բառը թուրքերենում «գութան» ձևով է փոխ առնվել: Տվյալ բառը վրացերենից փոխառյալ լինելու դեպքում, բառավերջի «ի» հնչյունի անկումն էլ նկատի առնելով հանդերձ, թուրքերենում փոխառնված պիտի լիներ «գութան» «qutan» ձևով:

Նույն օրինաչափությամբ էլ հայերենից փոխառյալ են հետևյալ բառերը. բազուկ>փաղը/վեղիք, դուռոց>քրքառ, անդունդ>քանթուն, թագավոր>թեֆոր, ջերմուկ>չերմիք և այլն:

Բառավերջի կ, տ, և խուլերի (արևմտահայերենում՝ ձայնեղների) շնչեղացում.— Օրինակ՝ հերկ>հերք, պզտիկ>բըզդք, անկուռ>անգուր, պատրեմ>բադը, մուրեմ>մուրչ:

(Արդի թուրքերենում բ, գ, դ, շ ձայնեղ պայթականներով վերջացող բառեր չկան. դրանց փոխարինում են համապատասխան լծորդ փ, ք, ը, չ շնչեղները):

Բառավերջի գ ձայնեղ պայթականի, դ ձայնեղ շփականի շնչեղացում՝ ք պայթականով.— Օրինակ՝ մարագ>մերեք, տասնհինգ>դասնիք, հոտաղ>հոդաք, առաստաղ>արասթաք, պատեղ>բասթք:

Խուլերի ձայնեղացում՝ համապատասխան լծորդներով.— Օրինակ՝ պարան>բարան, տուտու>դուդու, կտառ>գողոռ, ժամկոչ>զանգոչ, նալ>ջալ:

Բառավերջի շփական ր ձայնորդի և ընդհանրապես ծ խուլի ձայնեղացում.— Օրինակ՝ թրթուր>թըրթըլ, անիծ>անըզ, անիծած>անիզազ:

Շփական խոլ խ-ի փոխադրելով՝ կոկորդային հ-ով.—Օրինակ՝ խաչ>հաչ, խաշիլ>հաշըլ, խավ>հավ:

(Արդի գրական և խոսակցական թուրքերենը խ հնչյունը չունի, այն պահպանված է միայն որոշ բարբառներում):

Հնչյունափոխություններ՝ բառ ձայնավորների ներդաշնակության օրենքի: Ձայնավորների ներդաշնակության օրենքը բնորոշ է մի շարք լեզուների՝ թյուրքական, ալթայական, մոնղոլական, ուզբո-ֆիննական և այլն: Թուրքերեն լեզվում այդ օրենքը պայմանավորված է.

1) Նախավանկում կոշտ (հտնալեզվային) ձայնավորներից հետո կոշտ, և փափուկ (առաջնալեզվային) ձայնավորներից հետո փափուկ ձայնավորների հաջորդականությամբ՝ հետագա վանկերում:

2) Նախավանկի շրթնային ձայնավորներին հետագա վանկերում հաջորդում են բաց հտնալեզվային ա, բաց առաջնալեզվային է (ե) կամ շրթնային փակ ու, ւ ձայնավորները:

Այս երկու՝ ձայնավորների ներդաշնակության մեծ և փոքր կանոնների համաձայն, թուրքերենում, նախավանկի ա և բ կոշտ ձայնավորներին հաջորդում են ա կամ բ, իսկ է և ի փափուկ ձայնավորներին՝ է կամ ի ձայնավորները: Իսկ շրթնային օ և ու ձայնավորներին հաջորդում են բաց ա կամ նեղ ու ձայնավորները, և օ և ւ շրթնային փափուկ ձայնավորներին՝ բաց է և նեղ ւ ձայնավորները:

Փոխառյալ բառերի օրինակներ, որոնք ենթարկվել են ձայնավորների ներդաշնակության օրենքին. պատիճ>բադըչ, պաստեղ>բասթըք, մալիս>մալըս, խաշիլ>հաշըլ, շերմուկ>չերմիք, տեփուր>թեփիր, փեթակ>փեթեք, մոզիկ>մոզաք, թոռն>թորուն, մոծիլ/մծիլ>մուջուր, կորեզան>քորունգա, կոպիտ>քուբաթ, գուռն>քուրնա:

Երկվանկ բառերում առկա ա բաց հտնալեզվային ձայնավորները փափկանալով փոխվում են հտնալեզվային է-երի, երբ բառը թուրքերենում վերջանում է շնչեղ ֆ-ով: Օրինակ՝ մարագ>մերեք, մարդակ>մերթեք, դարակ>թերեք, կափանք>քեփենք:

(Շնչեղ ֆ-երին փափուկ ձայնավորներ նախորդելու կամ հաջորդելու օրինաչափությունը կա նաև օսմաներենում):

Նույնպես բառերում առկա ա ձայնավորները պահպանվում են. օրինակ՝ առաստաղ>արասթաք, ապարահ>աբարա, ավանակ>ավանաք:

Փոխառյալ բառերի հնչյունափոխական և տառադարձական օրինաչափությունները, իհարկե, չեն սպառվում այսքանով: Սակայն, վերևի բացահայտումներն իսկ կարող են օժանդակ միջոց ծառայել, թե ինչ-

պիսի օրինաչափություններով են փոխ առնվում հայերեն բառերը՝  
թուրքերենում: Շահեկանությունից զուրկ չէ իմանալ, թե բոլոր թուր-  
քական ծագումով բառերը (կան քիչ թվով բացառություններ) խստորեն  
ենթարկվում են ձայնավորների ներդաշնակության օրենքին: Հետևա-  
բար, մեր բառացուցակում նշած մոտ երեսուն բառ, որոնք չեն ենթարկ-  
վում այդ օրենքին, լեզվաբանական այլ ազդակների կողքին, կարող են  
ևս օժանդակ հիմք ծառայել դրանց հայերենից փոխառյալ լինելու  
մասին:

\* \* \*

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ՝

ա) որքան խոր ու բազմազան է եղել նվաճված հայ ժողովրդի մշա-  
կութի ազդեցությունը թուրքական մշակութի տարբեր բնագավառնե-  
րում,

բ) ներկայումս, հայերենից թուրքերենում փոխառյալ գրական բա-  
ռերը կրկնապատիկ անգամ ավելի են հայերենում թուրքերենից փո-  
խառյալ բառերի քանակից: (Պրանք օսմանյան ժամանակաշրջանի ռազ-  
մաքաղաքական և վարչատնտեսական 40-ի մոտ տերմիններ են, որոնք  
օգտագործվում են սոսկ հայ պատմագիտական գրականության մեջ):

Х. П. АМИРЯН

## АРМЯНСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

### Резюме

Вопрос об армянских заимствованиях в современном турецком языке до сих пор не являлся предметом серьезных исследований языковедов.

Армянские заимствования в турецком языке, собранные из современных турецких печатных изданий, достигают 223, из них 111 нашли отражение еще в «Словаре армянского языка» академика Гр. Ачаряна. Исследование показало, что число армянских заимствований возрастает: некоторые из них, ранее употреблявшиеся лишь в разговорном турецком языке Анатолии, в настоящее время постепенно проникают в турецкие словари и чаще употребляются в художественной литературе. В статье кратко уяснены некоторые закономерности чередования букв и звуков заимствованных слов.

- 1 Հ. Անադյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951:
- 2 Գ. Ն. Երևան, Քուրբանի ծագումը, Երևան, 1975:
- 3 Baykara Barbaros, Nefret Köprüsü, İst., 1974.
- 4 Cem Güney Eflatun, Bir varmış, bir yokmuş, İst., 1963.
- 5 Kemal Demıray, Temel Dil Bilgisi, İst., 1975.
- 6 K. Dursun, Tarık, Denizin Kanı, İst., 1973.
- 7 Eliciın Emin Türk (çeviren), Dünya Mızahından Seçmeler, İst. 1972.
- 8 Erdinc Fahri, Memleketimi anlatıyorum. İst.
- 9 Erendoz Kasnak, Dünya Mızahından 3000 Fıkra, II cilt, II baskı, İst., 1976.
- 10 Vecihe Hatipoğlu, Türkçenin Ekleri, Ank., 1974.
- 11 Suat Hisarcı, Dede Korkut Kitapları, II baskı, İst., 1966.
- 12 Kemal Yaşar, Demirciler Çarşısı Cınayeti, İst., 1974.
- 13 Köprüsü M. Fuat, Edebiyat Araştırmaları, Ank., 1966.
- 14 Aziz Nesin, Zübük, Sofiya, 1963.
- 15 Aziz Nesin, Mahallenin Kısmeti, İst., 1957.
- 16 Pıfat Otyam, Gide-Gide, 1/2/3 İst., 1972.
- 17 Ömer Polat, Mahmudo ile Hazel, İst., 1973.
- 18 Ömer Polat, Saragöl, İst., 1974.
- 19 Ömer Polat, Dilan, İst., 1976.
- 20 Kemal Tahır, Devlet Ana, Ank., 1969.
- 21 Umur Dünvası, Sofiya, 1965.
- 22 Yaver Sobri Atoman, Barlar, İst. 1979.
- 23 Zübeyr Hamit Koşan, PULUR, Ank., 1977.
- 24 A. H. Кононов, Грамматика турецкого языка, М., 1941.

#### Հոդվածներ և պարբերականներ

- 25 Գ. Ք. Զանովյան, Հայաստանի լեզվի հին անատոլիական ծագման վարկածը, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, Երևան, 1976, էջ 108:
- 26 Խ. Ամիրյան, Հայերենից փոխառյալ բառեր ժամանակակից Քուրբանում, «Լրարեր հասարակական գիտությունների», № 4, Երևան, 1980, էջ 81—87:
- 27 Ազգագրություն-բանահյուսություն, № 1, «Գամիրթ», 1970, էջ 97:
- 28 All Dayı, haftalık gazete, İst, 1950.
- 29 Bilimsel Bildiriler, Türk Dil Kurumu yayınları, sayı: 270, Ank., 1968.
- 30 Türk Dili, aylık dergi, Ank.
- 31 Türk Folklor Araştırmaları, aylık dergi, Ank.

#### Բառարաններ

- 32 Հ. Անադյան, Հայերեն զավառական բառարան, «Հմիկյան ազգագրական ժողովածու», հ. Բ., 1913:
- 33 Հ. Անադյան, Հայերեն արժատական բառարան, 8 հատորով, Երևան, 1971—1979.
- 34 Pars Tuglacı, Okyanus Ansiklopedik Sözlük, 11 basım. İst, 1978.
- 35 Türkçe Sözlük, Türk Dil Kurumu Yayınları, sayı: 403, Ank., 1979.
- 36 Derleme Sözlüğü, Türk Dil Kurumu yayınları, sayı: 211, Ank. 1963.

#### Կրճատումներ

Ank. Ankara.

İst. İstanbul

Ն. Ք. Ք. «Okyanus Ansiklopedik Sözlük»-ում ցույց է տրված, որ հայկական ծագում ունեցող բառ է: